Ատրպէյճանի ափուրջի հետ աշխատանքներու գծով պետական մարմին-կոմիտէն արտասահման բնակող իր քաղաքացիներուն դիմած է հայրենիք չվերադառնալու, իրենց հարազատներուն «Քորոնա» ժահրով վարակելու վտանգին չդիմելու, Ատրպէյճանի առողջապահութեան համակարգին լրացուցիչ բեռ չստեղծելու համար եւ խորհուրդ տուած է մնալ բնակած երկիրները:

Ըստ «Ազատիկի», այդ յայտարարութիւնը լուրջ անհանգստութիւն յառաջացուցած է արտասահման բնակող եւ ուսանող Ատրպէյճանցիներուն քով: Անոնք այդ գնահատած են որպէս հայրենիքի կողմէն իրենցմէ հրաժարելու եւ պատասխանատուութենէ խուսափելու գործողութիւն: Թերթը Պաքուի իշխանութիւններու այդ քայլը որակած է իսլամափոխութիւն, այն պարագային, երբ բոլոր պետութիւնները ամէն միջոց կը ձեռնարկեն իրենց քաղաքացիներուն հայրենիք վերադարձնելու, առողջութիւնն ու անվտանգութիւնը ապահովելու եւ հնարաւոր նպաստաւոր պայմաններ ստեղծելու համար:

Երկու Ուղղութիւններով Հայաստան-Վրաստան Գնահարկի Փակուեցաւ

Կողմերու փոխադարձ համաձայնութեամբ Հայաստանն ու Վրաստանը որոշած են 14 Մարտէն սկսեալ 10 օրով ժամանակաւորապէս կասեցնել երկու երկիրներու միջեւ քաղաքացիներու տեղաշարժը: Այս մասին Ֆէյսպուքի իր էջին վրայ գրած է ՀՀ փոխ վարչապետ Տիգրան Ավինեան:



«Միաժամանակ, երկու երկիրները կ'ապահովեն հայրենիք վերադառնալու ցանկութիւն յայտնած քաղաքացիներին անարգել մուտքը իրենց երկիրը:

«Այս սահմանափակումները տարածուած են թրանսփորթի բոլոր տեսակներին վրայ:

«Սահմանափակումները չեն տարածուում բեռնափոխադրումների վրայ:

«Հայցում ենք բոլորիդ ներդրումները պատճառած անյարմարութեան համար: Համոզուած ենք՝ առկայ է համընդհանուր գիտակցում, որ այս քայլերը ձեռնարկուած ենք բացառապէս հանրութեան անվտանգութիւնն ապահովելու նպատակով», - գրած է Ավինեան:

ԱՄՆ Արտաքին Գերատեսչութիւնը Յրապարակած է Հայաստանի Մասին Զեկոյցը



2019 թուականին Հայաստանի կառավարութիւնը քայլեր ձեռնարկած է ոչ միայն նախկին իշխանութիւններուն, այլեւ իր օրօք պաշտօններուն ու իրաւաստներուն ենթադրեալ չարաշահումները հետաքննելու եւ մեղաւորներուն պատժելու ուղղութեամբ, ըսած է Միացեալ Նահանգներու Արտաքին գերատեսչութիւնը մարդու իրաւունքներու պաշտպանութեան նուիրուած հերթական տարեկան գեկոյցը: Որպէս ըսուածին ապացոյց, Ամերիկայի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը վկայաբերած է բարձրաստիճաններու նկատմամբ անցեալ տարի սկսուած քրէական գործերն ու դատավարութիւնները:

«Սեպտեմբերի 12-ին մեկնարկեց նախկին բարձրաստիճան պաշտօնեաների դատաքննութիւնը՝ պարզելու նրանց ենթադրեալ մասնակցութիւնը 2008-ի նախագահական ընտրութիւններին յետոյ բանակը ցուցարարներին դէմ հանելու գործում: Առաջադրուած են մի շարք մեղադրանքներ՝ սահմանադրական կարգի տապալումից մինչեւ քորուփցիա եւ Մարտի 1-ի գործով ձեռք բերուած ապացոյցների կեղծում», - կը նշէ Արտաքին գերատեսչութիւնը, թուարկելով գործով անցնող բարձրաստիճան պաշտօնեաներու անունները, նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեանի գլխավորութեամբ:

Ամերիկայի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը միաժամանակ կը նշէ, որ 2008-ի ողբերգական իրադարձութիւններէն աւելի քան մէկ տասնամեակ անց, 2019-ի Յունիսին, Հայաստանի խորհրդարանը օրէնք ընդունեց 1 Մարտի տուժածներուն աջակցութիւն տրամադրելու մասին, կառավարութիւնն ալ այդ նպատակով 720 միլիոն դրամ, 1,5 միլիոն տոլար յատկացուց:

Անդրադառնալով անցեալ տրուած Հայաստանի մարդու իրաւունքներու պաշտպանութեան ոլորտին ներս արձանագրուած խախտումներուն, Արտաքին Գերատեսչութիւնը յատուկ առանձնացուցած է դատական համակարգի անկատարութիւնը, ընդգծելով՝ հասկանալի խնդիրներ կան արդարադատութեան անկախութեան հետ կապուած: «Թէեւ օրէնք երաշխաւորում է արդարադատութեան անկախութիւնը, համակարգը հիմնա-


կանում իրեն անկախ ու անաչառ չի դրուելու», - կը փաստէ Արտաքին Գերատեսչութիւնը, աւելցնելով որ 2018-ի իշխանափոխութենէն յետոյ ալ, դատաւորներու նկատմամբ համատարած անվտանգութիւն կը տիրէ, հասարակական կազմակերպութիւններն ալ կը նշեն, որ դատական համակարգի մէջ կան շատ պաշտօնեաներ, որոնք ծառայած են նախորդ իշխանութիւններուն, դատաւորներու կաշառակերութիւնն ալ կը մնայ մտահոգութեան առարկայ:

Զեկոյցը կը յիշեցնէ նաեւ դատարաններու դռները արգելափակելու, վարչապետ Նիկոլ Փաշինեանի մայրեան կողմ, հաստատելով, թէ այդ ակնյայտօրէն արձագանգ էր նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեանին կալանքէն ազատելու, Երեւանի առաջին ատենանի դատարանի որոշման: «Որոշ դիտորդներ այդ քայլը գնահատեցին որպէս ճշուն միտակերպ համակարգի նկատմամբ», - կը նշէ գեկոյցը:

Ի դէպ, քորուփցիայի մասին. Արտաքին Գերատեսչութիւնը կը փաստէ, որ ժամանակին, Հայաստանը յայտնի էր բազմաթիւ ոլորտներու մէջ, անոնց կարգին, շինարարութիւն, հանքարդիւնաբերութիւն, խորհրդարան ու դատական համակարգ, առկայ համատարած քորուփցիայով: Թաւաշեալ յեղափոխութենէն յետոյ, պետական կառուցներու ու նախարարութիւններու մէջ քրէական գործեր չարուցուած են, ըստ դատախազութեան, 13 ամսուայ ընթացքին, իրաւապահները 110.5 միլիոն դրամի, մօտ 230 միլիոն տոլարի իւրացման, յափշտակութեան ու պաշտօնական դիրքի չարաշահման դէպքեր յայտնաբերած են, պիտուէ վերադարձուած է 30 միլիոն դրամ, մօտ 63 միլիոն տոլար:

«Որոշ նախկին պաշտօնեաներ պատրաստակամութիւն են յայտնել պետութեանը փոխանցել իրենց սեփականութիւնը՝ թերեւս քրէական հետապնդումից խուսափելու համար», - կը փաստէ գեկոյցը, մէջբերելով իրաւապաշտպաններու մտահոգութիւնը, թէ անհրաժեշտ է, որ կառավարութիւնը առաւել թափանցիկ ներկայացնէ այդ պաշտօնեաներու հետ իր բանակցութիւններն ու քորուփցիայի դէմ պայքարը դարձնէ աւելի համակարգուած:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Յորդորը Կորոնավիրուսի Համաւարակի Առնչութեամբ



Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Մտահոգութեամբ եւ աղօթքով ենք հետեւում կորոնավիրուսի համաւարակի շուրջ աշխարհում տեղ գտնող զարգացումներին: Այս դժուարին ժամանակներում, երբ մարդկութիւնը փոթորկուած է համաւարակի վտանգով, որից անմասն չէ Հայաստան աշխարհը, եւ խոովայց է նաեւ մեր կեանքը, հայրաբար յորդորում ենք մեր հոգեւոր հայրերին եւ հաւատացեալ ժողովրդին՝ առաւելագոյն զգուշութիւն ցուցաբերել եւ խուսափել հանրային շփումներից եւ կուտակումներից:

Կոչ ենք ուղղում բոլորին՝ գործել անձնական եւ հանրային բարձր գիտակցութեամբ եւ պատասխանատուութեամբ ոչ միայն մեր անձերի, այլեւ միմեանց հանդէպ հոգածութեամբ՝ խորապէս ըմբռնելով, որ այս պահին իւրաքանչիւրի կեանքի անվտանգութիւնը նաեւ մեր անձնական պատասխանատուութիւնն է: Առ Աստուած ապահովութեամբ աղօթում ենք վարակուածների եւ մեկուսացուածների ապաքինման եւ հոգեւոր ամրութեան համար: Մեր բարձր գնահատանքն ու օրհնութիւնն ենք բերում զօրուգիշեր իրենց անսակարկ ծառայութիւնը մատուցող մեր բժիշկներին, ովքեր առաւելագոյն ջանքեր են ներդնում իրենց ծառայութեան մէջ՝ գործելով արտակարգ իրադրութեան պայմաններում:

Առկայ կացութեան շուրջ խորհրդակցելով մեր Եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալների հետ եւ ստեղծուած իրավիճակը այսօր քննարկելով հայաստանեան եպիսկոպոսների հետ՝ որոշեցինք.

Ա. Մինչեւ Աւագ Հինգշաբթի ընկած ժամանակահատուածի համար Եկեղեցիների ծառայութեան ժամեր սահմանել իւրաքանչիւր օր ժամը 9:00-ից մինչեւ 19:00-ը՝ հաւատացեալների անհատական այցելութիւնների ու առանձնական աղօթքների, ինչպէս եւ Սուրբ Հաղորդութեան եւ հոգեւոր միւս կենսական պահանջներին բաւարարման համար,

Բ. Սուրբ Պատարագի արարողութիւնները անցկացնել դռնփակ, առանց հաւատաւոր ժողովրդի մասնակցութեան՝ ըստ կարելիութեան տեղերում կազմակերպելով պատա-

րագների հեռասփուռմը,

Գ. Մաղկազարդի տօնին չեղարկել մանուկների օրհնութեան կարգը, Անդաստանի արարողութիւնը եւ ճիւղերի օրհնութիւնը կատարել առանց հաւատացեալների ներկայութեան,

Դ. Սուրբ Աստուածածնի Աւետման տօնին՝ Ապրիլի 7-ին, չկատարել մայրութեան բերկրանքին սպասող կանանց օրհնութեան կարգը, Ե. չկատարել Սգ Պսակի արարողութիւններ,

Զ. Ս. Մկրտութեան խորհուրդը կատարել խիստ անհրաժեշտութեան դէպքում (մկրտուողի հիւանդութեան պարագայում),

Է. յուղարկաւորութիւնների պարագային կատարել միայն Գերեզմանի կարգը՝ յորդորելով սպացեալներին ձեռնպահ մնալ յուղարկաւորութեան եւ հոգեհացի մարդաշատ հաւաքների կազմակերպումից:

Սոյն որոշումները հրահանգելով եկեղեցական կառույցներին ի գործադրութիւն՝ առաջիկայ չորեքշաբթին՝ Մարտի 18-ը, յայտարարում ենք համազգային աղօթքի օր՝ հրաւիրելով իւրաքանչիւրին ժամը 19:00-ին իր գտնուելու վայրում իր առանձնական աղօթքով միանալու հոգեւոր դասին՝ հայցելով, որ Տիրոջ օգնականութեամբ աշխարհը եւ մեր ժողովուրդը ի զօրու լինեն միաբանութեամբ, փոխադարձ զօրակցութեան ոգով յաղթահարելու այս փորձութիւնը:

Այս դժուարին պահին հարկ է սիրելիներ, միասնական կերպով համախմբուել եւ ամենայն աջակցութեան ցուցաբերել ՀՀ կառավարութեանն ու պատկան մարմիններին, խստօրէն հետեւել թելադրուող բոլոր հրահանգներին եւ իշխանութիւնների կողմից սահմանուած պահանջներին:

Մենք միասին՝ հանրային համերաշխութեամբ, քաղաքացիական եւ հոգեւոր բարձր պատասխանատուութեամբ ու գիտակցութեամբ եւ մեր Տիրոջ շնորհով ու ողորմածութեամբ կը յաղթահարենք նաեւ այս դժուարութիւնը: Կեանքը աստուածային պարգեւ է եւ ամենաթանկը, որին պէտք է հոգ տանենք միմեանց հանդէպ սիրով: Հիմա՛ է ժամանակը վկայելու մեր սիրոյ եւ միասնութեան մասին:

Տիրոջ օրհնութիւնը, շնորհն ու ողորմութիւնը

Կարմիր Պոետը.Կեանքի' Պոետը Եղիշէ Չարենցի Ծննդեան Տարեդարձին Առթիւ - Մարտ 13, 1897



Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո միասնական ուժի մեջ է

Եղիշէ Չարենց

ԱՒԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ

Եղիշէ Սողոմոնեանի (Չարենց) պարագային, ներքին է պոէտ բառը՝ բանաստեղծի փոխան, քանի իր այնքա՞ն նախընտրած կցանունն էր այդ, որ դարձած է անբաժանելի իր անունան կողքին՝

Ե՛ս եմ հիմա - մի պոետ. եւ իմ անունը - Չարենց -

Պիտի վառուի դարերում, պիտի լինի բա՛րձր ու մեծ:

13 Մարտին ծնաւ այդ կարսեցի մանուկը, որ աւելի ուշ իր անունը փայլատակեց հայոց երկնակամարին վրայ կեանքի գրեթէ բոլոր ոլորտներէն ներս եւ մարգարէանալով գրեց՝

Ես եկել եմ դարերից ու գնում եմ յաղթական

Պէպի դարերը նորից՝ դէպի վառուող Ապագան:

Արտակերտն անձնաւորութիւն մը, որ իր յախուռն ու կրքոտ նկարագիրով եղաւ իւրատիպ երեւոյթ մը իր ժամանակաշրջանին: Գուռնեղ տիպար մը, որ շարժեց հետաքրքրութիւնը ժողովուրդի բոլոր շերտերուն՝ պետականէն ուսմիկն ու բանուորը, գրականէն գիտնորականն ու քաղաքականը, կիներէն մինչեւ գրականագէտները: Յայտնուեցաւ զէն ի ձեռին որպէս կամաւոր՝ դէպի արեւմտեան Հայաստան եւ երբեմն բեմերու վրայ՝ որպէս գրականութեան ռահսորդ, բանտարկեալ մը՝ Երեւանի Ուղղիչ Տան մէջ, իր մէկ դատապարտելի արարքին համար եւ հայրենի պետական աւագանիին շփացած գրողը իր անուրանալի տաղանդին շնորհիւ: Քաղաքական հակառակորդներու դիմաց աննահանջ մարտիկ մը, հակախոհ գրչակիցներու նկատմամբ անխնայ ու խիստ, կծու կարմիր՝ յեղափոխութեան ջատագովութեան ընթացքին եւ թունդ հայրենասէր՝ Հայաստանի անհիւրընկալ սեւ պատերուն փարած: Սիրոյ ամենայուզական փափկասիրտ սիրերգակը եւ սեռի հանդէպ բոցավառ ասպետ մը՝ տարփասէր տողերով եւ կրքազրգիւ պատկերներով: Ոգելից խմիչքի հանդէպ հանրածանօթ իր թուրութեամբ եւ ծխամոլ մը անտարակոյս: Իրապաշտ վէպի հիմնական դէմքերէն նաեւ: Գրական անկրկնելի տողերու եւ ասոյթներու վարպետ ու ինքնատիպ բառակերտիչ. հայերէն լեզուի ու բառագանձի հմուտ պե-

ղիչ: Հետեւաբար, ինչպէ՞ս տալ ամբողջական կերպարը Չարենցին. ո՞վ կրնայ լիակողմանիօրէն ներկայացնել լիարժէք Չարենցը որպէս մարդ, քաղաքացի, գրող, թարգմանիչ, խմբագիր, սերունդներու պատգամախօս, հայրենիքի երգիչ եւ դարերու դիմաց կանգնած կրանիթեայ անհատականութիւն: Չարենցը իր բոլոր կողմերով կեանքի բազմերես երեւոյթներն է հօր անհատի մը մէջ խտացած:

Կարմիր պոէտ: Կեանքի՛ պոէտ:

Ան հանձարեղօրէն գտած էր գաղտնիքը պատմութեան մէջ անջնջելիօրէն իր անունը դրոշմելու: «Եթէ կ'ուզես խօսքդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր». եւ այս սկզբունքէն մեկնած իր կտակած գրական ժառանգութիւնը իր օրերու կեանքն է ու պատմութիւնը, ընկերային ու քաղաքական ելեւէջները, հոգեմտաւոր երեւոյթներու արտացոլանքը, պատմակերտիչ ցնցումները: Երբ պատերազմին դժիւնք բովէն կ'անցնէր՝ Մահուան Տեսիլով եւ Տանթէական Առասպելով կու տար այն՝ ինչ որ էր կեանքը: Երբ բանուոր դասակարգը կը փոթորկէր խելակորոյս կատաղութեամբ՝ Ամբոխները խելագարուածը կը դառնար հարագատ ու հրեղէն նկարագրութիւնը անոր: Հայոց պատմութեան ստուերոտ եւ պայծառ էջերը, ամօթալի եւ պանծալի դրուագները կը գտնէք անոր տողերուն մէջ՝ կարծէք ըլլար հմուտ վերլուծաբանը հայութեան անցեալի փառքին եւ կործանուած ու ցաքուցրիւ գահին: Սիրոյ երգիչը այնքա՞ն խոնարհ եւ զգայուն կը գրէր մայրերու նուիրուած իր հրաշագեղ տողերը: Մատենագրութեան գիտակը եւ ժամանակակից գրականութեան սրտոտն մեկնաբանը իր ուշադրութեան առանցքին պահեց Նարեկացին ու Քուշակը, Սայաթ Նովան ու Թումանեանը, Մեծարենցն ու Բակունցը: Բայց եւ ունէր իր խօսքը՝ ապագային ուղղուած:

Ան սրատես բիբերով նկատելով որ ազգային աղէտ մը եղած է ներ-հայկական փեռեկումները, ականատեսն ըլլալով պառակտումներու կործանարար հետեւանքներուն եւ կանխատեսելով անխուսափելի գալիքը, ոսկի պատգամ մը փոխանցած է գրելով՝ որ փրկու-

թիւնը կու գայ միայն հաւաքական ուժով: Հաւաքական գիտակցութիւնը ենթահողն է որեւէ յաջողութեան. մի գուցէ անխախտելի կանոնը հաւաքական նուաճումներու: Արդեօ՞ք ինքն ալ ի՛ր իսկ կենդանութեան գոհը չէր գրական-քաղաքական միջավայրի երկփեղկումներուն, միջակ ու ճղճիմ գրչակներու խժբժանքին եւ անուպայ հալածանքներուն: Ինք չվճարե՞ց գինը չարանեմ տարրերու՝ որոնք չէին հանդուրժեր անվիճարկելի հանձարը անոր: Վճարե՞ց եւ... կեանքի՛ գնով:

Երեւի կանխագագում մը եւս կը տանջէր գինք: Հայրենիքը լքող, հայրենիքէն չուող շարան շարան երամները: Հայրենասիրութեան անկում մը նկատած ըլլալու է ան՝ երբ մեկնով կը քանդակէր հայ բանաստեղծութեան անմահ աղօթքներէն մին՝ Ես իմ Անուշ Հայաստանի, ուր գմայլելի տաղաչափութեամբ ու հատիկ հատիկ բառերով գեղակերտ սկիհը կը սարքէր հայ գրականութեան շքեղակերտ խորանին: Եւ սիրելի հայրենիքը՝ իր նայիրեան աղջիկներով, ողբանուագ սագը, վիշապաձայն բուքը, մութ խրճիթները, երկաթագիր գիրքերը եւ անհաս Մասիս սարը: Այս քերթուածը քայլերգի համարժէք տարողութիւն եւ հնչեղութիւն ստացաւ Հայաստանի եւ ի սփիւռս աշխարհի հայութեան մօտ եւ բեմերուն վրայ: Անոր հոգեզմայլ

երածշտութիւնը առաւել՝ սլացք տուաւ անոր խօսքին ու նպատակին ուժգնութեան:

Ապագայատեսիլ գրողն էր կեանքի Պոէտը որ հակառակ Երկիր Նայիրի ապրած արհաւիրակ օրերուն, չարատեւ ճգնաժամերուն եւ չարագոյ հարուածներուն, տրորեց յուսահատութեան դոյզն խարխափումն անգամ: Տեսաւ պայծառ ապագան: Եւ մի՞թէ գրողի մը հիմնական առաքելութիւնը յոյսի ներշնչումը չէ, ժողովուրդին մօտ լաւատեսութեան սերմերը ուռճացնելը չէ, հաւատքով ու յոյսով վաղուան սերունդները գինավառելը չէ: Այդ վեհ առաքելութիւնը կատարեց յանձնառու քաղաքացի Չարենցը եւ անկասկած, այնքա՞ն կարիքը կայ այս օրերուն Չարենցի հոգեշահ եւ օգտաւէտ պատգամներուն, երբ գանգուածներ դարձած են ուղեկորոյս, անտարբեր, ապագային եւ հայրենախոյս:

Հայաստանի մէջ ամենաշատ հոլովուող անուններէն է ան՝ թանգարանի փողոցներ ու արձաններ, քաղաքի գիրքեր ու տուն-թանգարան ու դրամանիչ: Որովհետեւ Չարենց ոչ միայն իր ժամանակին շունչն էր, այլեւ՝ այսօրուան ու վաղուան: Դարերէ եկած ու դարեր խոյացող տիտանն է Եղիշէ Չարենց, որ Նախախնամութիւնը հայութեան պարգեւեց 1897 Մարտ 13-ին:

Մտնուդդ շնորհաւոր Կարմիր Պոէտ. Կեանքի՛ Պոէտ:

Լոս Անճելըսում ԳԳ Գլխաւոր Հիւպատոսութիւնը Ժամանակաւորապէս Դադրեցնում է Քաղաքացիների Ընդունելութիւնը



Յարգելի հայրենակիցներ,
Հաշուի առնելով ԱՄՆ-ում կորոնավիրուսի (COVID-19) տարածման բարձր դինամիկան - քաղաքացիներին ռիսկային շփումներից պաշտպանելու անհրաժեշտութիւնը՝ ս.թ. Մարտի 16-ից Լոս Անճելըսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնը քաղաքացիների հիւպատոսական ընդունելութիւնը ժամանակաւորապէս իրականացնելու է միայն նախնական գրանցման (ժամադրութեան) դէպքում:

Այդ իսկ պատճառով խնդրում ենք նախապէս կապ հաստատել գլխաւոր հիւպատոսութեան հետ՝ ուղարկելով Ձեզ անհրաժեշտ ծառայութիւնների մասին հարցումը էլ-փոստի հետեւեալ հասցէին laconsul@mfa.am, consulateam@gmail.com՝ նշելով Ձեր բՉՋային համարը: Ձեր նամակը կուսումնասիրուի գլխաւոր հիւպատոսութեան կողմից եւ յետագարձ կապ կհաստատուի էլեկտրոնային նամակի կամ զանգի միջոցով:

Առաւել հրատապ հարցերի դէպքում կարող էք օգտուել գլխաւոր հիւպատոսութիւնում բացուած շուրջօրեայ թեժ գծից:

Յիշեցնում ենք, որ ներկայացուած փոփոխութիւնները միտուած են քաղաքացիների առողջութեան պահպանութեանը եւ կրելու են ժամանակաւոր բնոյթ:

ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւն
Լոս Անճելըս

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
Tel: (626) 797-7680
Massis2@earthlink.net

Պատմութեան Շարունակականութիւնը

«Ես թուրքիացի եմ, քաղաքացի մութրքիոյ Կանադայի տարածքում: Երկրորդ՝ հայ եմ: Առաւել եւս, մութրքիոյ հայ հաւաքականութեան մէկ մասնիկը ըլլալով հանդերձ, միաժամանակ Կանադայի եւ աշխարհատարած հայկական սփիւռքին բարոյական մէկ մասնիկն եմ, անոնց ցեղակիցն եմ»:

ՀՐԱՆՂ ՏԻՆՔ



ԴՊՎՏ. ՀՐԱՆՂ ԳԵՊԵՏԵԱՆ

Պատմութիւնը հաշուեն է: Այս պարագային՝ Թուրքիոյ հաշուեն, եւ երեւի՝ պոլսահայ իրականութեան: Եւ ասիկա հաշուն հարուստ պատմութիւններէն մէկն է՝ նկատի ունենալով, որ հայկական Պոլիսը որքան մեծ աւանդ ստեղծած է հայկական գրական, մշակութային, կրթական եւ ազգային ժառանգութեան մէջ:

Պոլիս, 12-17 Յունուար 2020: Հայկական Պոլիսը այնքան «լեցուն» է, որ ձանձրանալու ժամանակ չկայ: Ինչ խօսք, որ նոյնքան նաեւ կարելի է յազնալ անկէ: Անկախ՝ թէ որքան յաճախակա՞նութեամբ է, որ այցելած ես այդտեղ, բայց միշտ «հարստութիւն» մը կայ հոն եւ հայկական շունչ, որ պիտի ուզես տեսնել եւ ընկալել:

Բերայի հայ աւետարանական եկեղեցին առաջին հայ աւետարանական եկեղեցին է, որ հիմնուեցաւ

թիւնս քաջալերանք է, բայց նաեւ՝ կորով տալու փորձ, որ իրենք մինակ չեն:

Հրանդ Տինքի «Յիշատակի տունը» եւ իր «Ակօս» թերթի նախկին գրասենեակին մէջ զգացական, բայց նաեւ վաւերական պատմութիւն է: Արդէն չէնքի մոտաքին՝ գետինը, կայ յիշատակի գրութիւն մը, թէ՛ «Այստեղ սպանուեցաւ Հրանդ Տինքը»: Եւ իւրաքանչիւր նկար, խօսք, գրութիւն եւ վաւերագրական ժապաւէն՝ Հրանդ Տինքի մասին, պատմութիւնն է հաշուն, որ պայքարած է իր ինքնութեան եւ արժանահաւատութեան համար: Հրանդ կը գիտակցի, որ երկրին քաղաքացին է՝ «քաղաքացին Թուրքիոյ Հանրապետութեանն, բայց գիտէ նաեւ, որ ինք, հայ է»: Այն հայը, որ անջատուած չէ իր հայրենիքէն եւ ո՛չ ալ իր ցեղակիցներէն, որոնք աշխարհով մէկ տարածուած են: «Միաժամանակ Հայաստանի եւ աշխարհատարած

սրահը: Հոն են մեր բոլոր «մեծերը»: Իրենց նկարներով: Բայց նաեւ հոն են անոնց հոգին ու շունչը, որոնք ապրած են ու տակաւին կ'ապրեցնեն: Ինչպէս նաեւ՝ մշակութային-գրական այն մեծ ժառանգութիւնը, որ ձգեցին մեզի՝ իւրաքանչիւր հայուն: Երուխանը, Միսաք Մեծարեցը, Արամ Հայկազը, Արշակ Չօպանեանը՝ բոլորը... Բայց սրահին անկիւնը մասունքի մը նման պահուած է կոմիտաս վարդապետին դաշնակը: «Մեծ հանդիսութեամբ յիշատակեցինք կոմիտասի ծննդեան 150-ամեակը», ըսաւ Սիլվան:

Նախալի Պաղտատը, Տիանա Պուլտուքը եւ Մուրազ Սարանկիլը կեդրոնական վարժարանին մէջ հայերէնի ուսուցիչներն են: Երեքն ալ՝ երիտասարդ հայորդիներ, որոնք մեծագոյն նուիրուածութեամբ կը սորվեցնեն մայրենին: Քաջալերական էր տեսնել, որ երիտասարդ ուժեր ստանձնած են մայրենիով դաստիարակութիւնը: Խօսեցանք մայրենիի դասաւանդումին եւ հայոց լեզուի խօսակցութեան նահան-

ըսել», ըսաւ ան՝ նոյն ժպիտը եւ ուրախ տրամադրութիւնը դէմքին վրայ: Ռոպէր Հատտէճեան հաղորդական մարդ է, եւ իր հաղորդականութեան մէջ շատ բան կայ սորվելիք: Պէտք է սորվել մեր երէց սերունդի ներկայացուցիչներուն փորձառութիւնէն եւ անոնց տեսադաշտերէն:

Արա Գոչունեանը երիտասարդ հայ մտաւորական-խմբագիր է, որ լաւապէս կը դրսեւորէ նոր սերունդի եւ ազգային ինքնութեան ու առաքելութեան կառչելու գիտակցութիւնը: Ան ժառանգորդն է հայկական օրաթերթի մը՝ «Ժամանակ»-ին եւ անոր աւելի քան հարիւր տարիներու աւանդին, օրաթերթ մը, որ մեծ ներդրում ունեցած է հայկական մամուլի եւ հրատարակագրութեան պատմութեան մէջ՝ Թուրքիա եւ աշխարհով մէկ: Եւ Արայի համար եթէ կան մարտահրաւէրներ, բայց հայ ինքնութիւնը եւ անոր պատմութեան շարունակականութիւնը վեր են ամէն տեսակի հաշուարկէ եւ գրականէ: Այս իմաստով, Արան կե-



ջին ու հայապահպանումին եւ տակաւին տարբեր մարտահրաւէրներու մասին՝ Թուրքիոյ իրականութիւններուն լոյսին տակ: Յստակ է, որ Թուրքիոյ մէջ հայ ըլլալը ունի իւրաքանչիւր ինքնուրուի: Եւ ճիշդ չէ Թուրքիոյ հայկական իրականութեան նայիլ մեր արտաքին աշխարհի ըմբռնումներէն եւ պրիսմակէն: Տարբեր է շատ բան: Կեանքը, մթնոլորտը, կացութիւնը, պայմանները, տուեալները եւ տակաւին՝ քաղաքական-ընկերային կարգավիճակները: Խօսեցանք այս բոլոր երեւոյթներուն մասին: Բայց այդ բոլոր իւրաքանչիւր ինքնուրուի եւ տարբերութիւններուն մէջ չէն Նախալին էր, որ իր երիտասարդ վճռական հայեացքով դրաւ իր համոզումը. «Բայց հայ ենք»:

«Հայ մամուլէն մինչեւ այսօր տակաւին չեմ կշտացած»:

Ռոպէր Հատտէճեանը ունի երկար տարիներու վաստակ՝ իբրեւ խմբագիր, գրող ու հրատարակագիր՝ «Մարմարա»-ի: «Արդէն իննսուն տարիքը անցայ, ըսաւ ան: - Ֆիզիքականս ատենը մէջ մը կը յիշեցնէ իմ տարիքս», ժպիտը իր դէմքին եւ ուրախ տրամադրութեամբ մը շարունակեց իր գրոյցը: Ռոպէր Հատտէճեանը շատ երկար ճամբայ կտրած է հայ մամուլի եւ հրատարակագրութեան առաքելութեան մէջ: Շատ ապրած եւ տեսած է... Բայց մանաւանդ ակնատես եղած է Թուրքահայ իրականութեան եւ անոր բոլոր մտահոգութիւններուն: Ան կը գիտակցի, որ Թուրքիոյ մէջ հայ ըլլալը դիւրին չէ: Բայց «կարելի է միտքը եւ մտանքով թիւնդ տարբեր ձեւերով արտայայտել ու վերջաւորութեան ըսել այն, ինչ որ կ'ուզէիր

ցած է ամուր պատնէշի վրայ:

«Հայ կաթողիկէ համայնքը կը հաշուէ մօտաւորապէս երկու հազար հինգ հարիւր մարդ»: Գերապայծառ Լեւոն Ջէքիեանն է Թուրքիոյ մէջ հայ կաթողիկէ համայնքի առաջնորդը: «Մեծամասնութիւնը կ'ապրի Պոլսոյ մէջ», ըսաւ ան: Գերապայծառ ծանօթ կղերական է, բայց նաեւ մտաւորական մարդ, որուն իմաստասիրական-փիլիսոփայական ու աստուածաբանական վաստակը մեծ է: Կրթական գործին կառչած է եւ կը հաւատայ հայ դպրոցին առաքելութեան՝ Թուրքիոյ մէջ թէ՛ այլուր: Հայ կաթողիկէ համայնքը Թուրքիոյ մէջ ունի պատմութիւն՝ միջին դարերէն սկսեալ: Եւ գերապայծառը այդ նոյն պատմութեան շարունակականութեան հաւատարմութիւնն է ու կառչած՝ անոր առաքելութեան:

«Այս հիւանդանոցը քաղաքին լաւագոյններէն է»: Թուրք վարորդն էր, որ գիտ Սուրբ Փրկիչ հիւանդանոցէն հասցուց պանդոկ: «Հայկական է եւ բժշկական շատ լաւ կարելիութիւններ ունի», եզրակացուց ան, երբ ինքնաշարժին վար իջայ:

Սուրբ Փրկիչը միայն հիւանդանոց չէ: Անիկա պատմութիւն է, որ տակաւին կ'ապրի եւ կը վկայէ: Թանգարանը, եկեղեցին, բժշկական սարքաւորումները, տարեցնորու պատսպարանը եւ տակաւին՝ գեղեցիկ պարտէզները: Հայուն պատմութիւնը կերտած բոլոր հայ պէյերը եւ ամիրաները իրենց նկարներով կը լեցնեն հայու հոգին: Կը նայիս իւրաքանչիւր նկարին եւ կըրնաս տեսնել անոնց տեսիլքը,



նոյն շարժումի ստեղծումէն անմիջապէս ետք՝ Յունուար 1846-ին, Պոլիս: Եկեղեցին կը պահէ իր հին եւ երբեմնի կառուցը, ինչպէս որ հիմնուած էր: Այս իմաստով, կ'ապրիս պատմութիւնը իր ամբողջութեան մէջ: Եկեղեցի յաճախող հաւատացեալներուն թիւը նուազած է գաղթի ու ճամբորդութիւններու պատճառով, բայց կայ տակաւին առաքելութեան կառչելու յանձնառութիւնը: Սոնա Էօզբենպէ եկեղեցուց քարոզիչն է: Եթէ պաշտամունքը երկրէն է՝ հայերէն եւ թուրքերէն, բայց, ինչ խօսք, որ հոգին հոն է... հայութեան մէջ: Ունին կարօտը հաղորդակցութեան, եւ ի մասնաւորի՝ դուրսի գաղութներուն հետ: Կրնայի տեսնել, թէ իմ այցելու-

սփիւռքի բարոյական մէկ մասնիկն եմ, անոնց ցեղակիցը»:

Forbes-ը Գիւմրին Ընդգրկած Է Գարնան Այցելելու Համար Ամենագեղեցիկ Վայրերու Ցանկին Մէջ



«Փորպը» ամերիկեան հեղինակաւոր պարբերականը կազմած է 17 ամենագեղեցիկ վայրերու ցանկը, ուր կարելի է մեկնել գարնան, ընդգրկելով նաեւ Գիւմրին: Ըստ «Արմենպրես»-ի, ցանկը կազմուած է զբօսաշրջութեան ոլորտի փորձագէտներու կարծիքներու հիման վրայ:

«Գերմանիայէն եւ Յունաստանէն դէպի Գիւմրի օդանաւային ընկերութիւններու նոր չուերթներուն մէջ, Հայաստանի երկրորդ քաղաքը, վերջապէս, յայտնուած է ուշադրութեան կեդրոն եւ այլեւս չի ասոցացվում առընչուի միայն 1988-ի Սպիտակի երկրաշարժի հետ: Գարունը ֆանտաստիք բացառիկ ժամանակ է Գիւմրի այցելելու համար, երբ խիստ ձմեռները կը հանդարտին եւ քաղաքը կը լեցուի

ծաղիկներով ու բոլորը կը պատրաստուին Ձատիկի տօնին, որ կը նշուի հիւթեղ միդրգերով եւ փլաւի առատ փսեսներով: Գիւմրին յայտնի է իր կոլորիտով երանգներով ու մշակութային հաստատութիւններով, համեղ ուտեստներով եւ հիւմորով գիւմրեցիներով», - ըսած է յօդուածը:

Յօդուածի հեղինակը խորհուրդ կու տայ Գիւմրիի մէջ համտեսել տեղի պանրիսաշը՝ պատրաստուած պանրի է եւ լաւաշէ:

«Փորպը»-ի 17 ամենագեղեցիկ վայրերու ցանկին վրայ ներառուած են նաեւ Լոնտոնը, Վանքուվըրը, Թիֆլիսը, Մեքսիք, Ինչպէս նաեւ Մարոքի, Իսլանտայի, Փաքիստանի, ԱՄՆ-ի եւ Փերուի շարք մը քաղաքներ:

Պիտի Ստեղծեն Նոր Հնարաւորութիւններ

Շարունակուած էջ 1-էն

տունը կը ցուցաբերեն համապատասխան աջակցութիւն դրամատուներուն եւ ընդհանրապէս տնտեսութեանը: Ի հարկէ, մենք հիմա նաեւ քննարկում ենք, թէ ինչ միջոցներ պէտք է ձեռնարկենք տնտեսական անխուսափելի դժուարութիւնները յաղթահարելու համար: Բայց ուզում եմ պարզաբանել, որ մենք մեր խնդիրը չենք ձեռնարկել, որ պէտք է տնտեսական դժուարութիւնները յաղթահարենք, մենք մեր խնդիրն այլ կերպ ենք ձեռնարկել՝ պէտք է պատրաստ լինենք օգտուելու համաշխարհային տնտեսութեան մէջ տեղի ունեցող անխուսափելի փոփոխութիւններից», - նշեց վարչապետը:

Նիկոլ Փաշինեանի համաձայն, կառավարութեան հաշուարկներով, համաշխարհային տնտեսա-

կան գործընթացներու հետեւանքով շուրջ 2 թրիլիոն տոլարի Համախառն ներքին արդիւնքի (ՀՆԱ) համաշխարհային անկում կը սպասուի: «Սա մի կողմից վատ է, բայց նաեւ նշանակում է, որ համաշխարհային շուկայում շուրջ 2 թրիլիոնի ազատուած դաշտ է գոյանալու: Եւ մեր ամբողջ քաղաքականութիւնը պէտք է ուղղուած լինի նրան, որ տնտեսական ազատուած դաշտում Հայաստանի պիզնէսը մեծացնի իր ներկայութիւնը: Եւ ճգնաժամը ոչ միայն հարցեր է բերում, այլ բացում է հնարաւորութիւններ: Մեր ռազմավարական մօտեցումը պէտք է լինի հետեւեալը՝ այս դժուարութիւնները մեզ համար բացում են նոր հնարաւորութիւններ, եւ մենք պէտք է կենտրոնանանք այդ հնարաւորութիւններից օգտուելու օրակարգի վրայ», - աւելցուց Փաշինեան:

4 Փակ Սահմանից Խուճապ

Շարունակուած էջ 2-էն

կուճներն էլ կարելի է բացատրել, որ մինչ այդ մաքսային որոշ ընթացակարգ կար, իսկ հիմա նաեւ առողջապահական ընթացակարգ են անցնում: Սա էլ ամէն մեքենայի հետ կապուած երկարացում է գործընթացը», - «Առաջին Լրատուական»-ի հետ զրոյցում ասաց նա:

Մեր գրուցակցի դիտարկմամբ՝ կարելի է, որ քաղաքացիներն իրենց երկրում մնան առաջիկայ շաբաթների ընթացքում ու վարակի աղբիւր չզառնան. «Վրաստանում առաջին դէպքերը գրանցուեցին Իրանից Ադրբեջանով վերադարձած քաղաքացիների միջոցով: Առաջին արդէն ապաքինուել է, երկրորդի թեստի արդիւնքն էլ բացասական եղաւ: Երկրորդ անձի հետ կապուած էլ նորից սպասում են երկրորդ թեստի արդիւնքներին: Եթէ նա էլ բուժուի՝ կը նշանակի, որ այսօր 33-ի հասած վարակուածների թիւը կը կրճատուի: Վրաստանն ունի համապատասխան պայմանաւորուածութիւն, որ փակուեն Հայաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի հետ սահմանները, Թուրքիայի հետ Սարփիի անցակէտը: Այս ամէնը միտուած է կորոնավիրուսի դէմն առնելու ու լոկալիզացնելու հիւանդներին, նրանց բուժման հարցերը լուծելուն: Ես լուրջ խնդիր չեմ տեսնում»:

Ինչ վերաբերում է 4 փակ սահմանների դէպքում պատերազմի հնարաւոր սաւանակաւորութեանը, Մելիքեանն ասաց. «Ոչ մի բան չի

կարելի չհաշուարկել: Բայց պէտք է նաեւ հասկանանք, որ Ադրբեջանում եւս վարակուածներ կան, Իրանի հետ աւելի ուշ է սահմանափակումներ մտցուել, ու կարող է աւելի լուրջ վտանգներ լինեն: Այն երկրորդ, որն այս ծանր վիճակում ազրեալացի դիմի, շատ լուրջ հաշուարկներ պէտք է անի: Քիչ հաւանական է, բայց ամէն ինչ պէտք է հաշուարկել ու ամէն ինչի պատրաստ լինել»:

ՄԱՀՀԻ փորձագէտ Արմէն Վարդանեանն «Առաջին Լրատուական»-ի հետ զրոյցում ասաց՝ բեռնափոխադրումների համար սահմանը չի փակուել, ուստի իրավիճակը կրիտիկական չէ. «Իհարկէ, տուրիստական հոսքերն են նուազելու, որը նոյնպէս տնտեսութեան վրայ ազդեցութիւն կ'ունենայ: Մեզ անհրաժեշտ սպրանքներն այդուհանդերձ Հայաստան կը մտնեն՝ խուճապի կարիք չեմ տեսնում»:

Վարդանեանի դիտարկմամբ՝ Ադրբեջանում էլ իրավիճակը բարւոք չէ, նա էլ սահմանները փակելու որոշում ունի, ուստի դժուար թէ գնայ արկածախնդրութեան. «ադրբեջանը Իրանի հետ է փակել սահմանը, Թուրքիայի հետ Նախիջեւանի տարածքում: Տարածաշրջանում փակ սահմաններ են, դժուար թէ նման արկածախնդրութիւն լինի»:

Փորձագէտի կարծիքով՝ իրավիճակն ինչ-որ չափով արտասովոր է, բայց խուճապի կարիք չկայ: «Իշխանութիւններն ամբողջութեամբ վերահսկում են իրավիճակը», - եզրափակեց նա:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Պատմութեան Շարունակականութիւնը

Շարունակուած էջ 7-էն

բայց մանաւանդ՝ անոնց հաւատքը: Հաւատքը՝ հայուն պատմութեան: Հայու կեանքը ապրելու, գոյատեւելու եւ անոր պատմութեան շարունակականութեան: 1830 թուականին հիմնուած, բայց եւ այնպէս ամուր կառուած՝ կը շարունակէ այս հիւանդանոցը՝ կերտելու համար հայուն պատմութիւնը:

Հայուն պատմութիւնը: Իմ եւ մեր իւրաքանչիւրին պատմութիւնը: Կը փորձեմ ապրիլ Հրանդ Տինքի «Յիշատակի տուն»-ը: Ինք չկայ: Բայց կայ իր «տուն»-ը՝ իր կեանքը: Իր ապրած իւրաքանչիւր փորձառութիւնը, որ կերտած է պատմութիւնը... Հայուն պատմութիւնը:

Եթէ Հրանդ Թուրքիոյ քաղաքացին է, ես ալ Լիբանանի եւ Կիպրոսի քաղաքացին եմ: Եւ չեմ ալ գիտեր, թէ իմ երկրային կեանքիս մէջ պիտի ստանամ երրորդ քաղաքացիութիւն:

Բայց կը շարունակեմ: Եւ Հրանդը՝ «Հայ եմ...»: Ու տակաւին Նաթալին՝ «Բայց հայ եմ...»: Եւ իւրաքանչիւր պատմութիւն, որ տեսայ եւ ապրեցայ Պոլսոյ մէջ... «Հայ

եւ հայկական էր»:

Եւ եթէ տակաւին լիբանանցի ու կիպրացի եմ, բայց «հայ եմ», եւ բոլորս հայ ենք: Եւ մեր բոլոր «տարբերութիւններուն» մէջէն՝ «օտար» չենք: Այլ բոլորս ալ «Հայաստանի ու Արցախի եւ աշխատարած հայկական սփիւռքի բարոյական մէկ մասնիկն ենք, ցեղակից ենք»:

Եւ այս «մասնիկ»-ը՝ «ցեղակցութիւն»-ը, իմ-մեր եւ հայուն պատմութիւնն է, որ կը շարունակուի եւ պիտի...

Հայկական մտահոգութիւնները շատ են: Մարտահրաւէրները՝ բաւական: Պոլիս ու տակաւին քիչ մը ամբողջ հայկական իրականութեան մէջ:

Բայց կայ պատմութեան շարունակականութիւնը: Իմ եւ իւրաքանչիւր հայու պատմութեան շարունակականութիւնն է: Եւ պիտի շարունակուի, որովհետեւ...


Բոլորս հայ ենք: Պոլիս եւ աշխարհով մէկ:

Եւ հայուն պատմութեան շարունակականութիւնը կը յաջողի, երբ բոլորս կը շարունակենք ապրիլ գիտակցութիւնը,

Որ՝ «հայ ենք...»:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ
 ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
 (626) 797-7680


 NATIONAL NOTARY ASSOCIATION
 NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773
 554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
 ghdepoyan@gmail.com